ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ*

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

V. Bayburdyan1933@gmail.com

DOI: 10.54503/1829-4073-2023.2.142-161

ՔՐԴԵՐԻ ԵՎ ԵԶԻԴՆԵՐԻ (ԵԶԴԻՆԵՐԻ) ԴԱՎԱՆԱՆՔԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր՝ քրիստոնեություն, իսլամ, ղզլբաշ, եզիդի, զազա, կաստա, Դերսիմ:

Ներածություն

Քուրդ ժողովրդի պատմությունը Մերձավոր ու Միջին Արևելքի տարածաշրջանում բնակվող մյուս ժողովուրդների պատմության համեմատ վատ է ուսումնասիրված: Դա հավասարապես վերաբերում է նաև նրանց դավանանքին և կրոնական հավատալիքներին: Այսպես, գիտությանը դեռևս չի հաջողվել պարզել այն հարցը, թե ի՞նչ կրոն են դավանել քրդերը մինչև իսլամի ընդունումը: Հավանական է համարվում, որ նախաիսլամական շրջանում նրանց հավատալիքները եղել են նույնը, ինչ իրանական լեզվաընտանիքին պատկանող մյուս ժողովուրդներինը: Այդ տեսակետի հիմնավորման համար որպես հիմնական կռվան բերվում է քրդերի և եզիդների մոտ պահպանված կրոնական ծեսերը, ինչը սակայն, չի կարող բավարար հիմք հանդիսանալ վերոհիշյալ տեսակետի գիտական հիմնավորման համար:

Գիտության մեջ շրջանառվող տեսակետներից մեկն այն է, որ քրդերի մինչիսլամական շրջանի կրոնը եղել է զրադաշտականությունը: Սակայն այդ վարկածի կողմնակիցներին առ այսօր չի հաջողվել ցույց տալ, թե երբ և ինչ ճանապարհով է այն տարածվել քրդերի մեջ, և արդյո՞ք ողջ քրդական բնակչությունն էր դավանում այդ կրոնը, թե նրա առանձին հավաքականություններ: Վերջապես պարզ չէ, թե զրադաշտականությունը քրդերի մեջ ի՞նչ ձևով է հանդես եկել, արդյոք «դասական» կամ «անաղարտ» տեսքով, թե այլ կերպ: Ի դեպ, քրդերի զրադաշտական լինելու վարկածը տարածում է գտել հենց

* *Հոդվածը ներկայացվել է 16.06.23, գրախոսվել է 16.06.23, ընդունվել է տպագրության 28.08.23:*

իրենց՝ քրդերի շրջանում, նրանց ավանդապատումներում և այլն: Մասնավորապես, առկա է VII կամ VIII դարերի անանուն մի քուրդ բանաստեղծի պոեմ, գրված քրդերենով և արամեական գրությամբ, որտեղ նկարագրվում է Շահրիզուրում (Իրաքյան Քրդստան – Վ. Բ.) արաբների կողմից զրադաշտական տաճարի ավերումը[1]:

Քրդերի դավանանքը

Հայտնի է, որ միջնադարում Սասանյաններին ենթակա երկրներում զրադաշտականությունից բացի տարածում էին գտել նաև քրիստոնեությունը, հուդայականությունը, բուդդայականությունը, սաբեականությունը, III դարի կեսերից նաև՝ մանիքեականությունը: Այդ իրողությունից եզրակացվում է, որ մինչև իսլամի ընդունումը հավանաբար քրդերի մեջ տարածում էր գտել նշված կրոններից որևէ մեկը: Այդ տեսակետը հավանական է համարվում մանավանդ այն պատճառով, որ արամեական, քրիստոնեական և արաբական աղբյուրներում տեղեկություններ են պահպանվել քրդերի մեջ մանիքեականության և որոշ չափով նաև քրիստոնեության տարածում գտնելու մասին[2]: Օրինակ, արաբ պատմիչ ալ-Մասուդին հաղորդում է, որ «ալ-յաղուբիյա և ալ-ջուրքան ցեղերը քրիստոնյաներ են, և նրանց բնակավայրերը գտնվում են Մոսուլի և Ջաբալ ալ-Ջուդի լեռան միջև»[3]: Սակայն իրաքցի արևելագետ Շաքեր Խասբաքը ժխտում է քրդերի նույնիսկ մի առանձին հատվածի կողմից քրիստոնեություն դավանելու վերաբերյալ արաբ պատմիչի հաղորդած տեղեկությունը: Նրա դիտարկմամբ, Քրդստանում քրիստոնեությունը դավանել են միայն հայերն ու նեստորական ասորիները, իսկ քրդերի դավանանքը եղել է զրադաշտականությունը, որից հետո նրանք ընդունել են իսլամը[4]:

Հավանական է համարվում նաև շրջանառվող այն տեսակետը, որ մինչիսլամական շրջանում քրդերը եղել են հեթանոսներ: Կարծիք կա նաև այն մասին, որ հսկայական տարածքներում ցրված, միմյանցից կտրված կամ թույլ կապերի մեջ գտնվող քրդական ցեղերի մեջ տարածում էին գտել այն բոլոր կրոնական հավատալիքները, որոնք առկա են եղել Առաջավոր Ասիայում: Անհայտության թանձր մշուշով է պարուրված և պարզաբանման կարիք ունի ոչ միայն քրդերի նախաիսլամական շրջանի դավանանքի ու հավատալիքների

---

[1] **Kurdo** 1988, 55.

[2] **Nikitin** 1922, 187; **Driver** 1922, 197.

[3] **Поладян** 1987, 68.

[4] Հասբաք, ալ-աքրադ, Բաղդադ, 1972, էջ 474 (հղումը ըստ **Поладян** 1987, 68):

վերաբերյալ հարցը, այլ նաև թե ե՞րբ և ինչպես է քրդերի մեջ տարածում գտել միաստվածության (մոնոթեիզմի) հետևորդ նոր կրոնը՝ իսլամը, որը «խորը անհայտության միջից» (Լեո) հայտնվել էր VII դարում: Վարկած կա այն մասին, որ երբ VII դարի 30-ական թվականներին արաբները նվաճեցին քրդաբնակ երկրամասերը, նրանք իրենց կրոնը քրդերին պարտադրեցին բռնի կերպով[5]: Ենթադրվում է, որ իսլամի տարածումը քրդաբնակ շրջաններում տեղի է ունեցել նաև միսիոներական քարոզչության ճանապարհով: Իսկ իսլամի տարածումը և քրդերի զանգվածային իսլամականացումը հավանաբար տեղի է ունեցել IX դարում, երբ արաբական խալիֆայությունը վերելքի մեջ էր: X–XI դարերում արաբների նոր կրոնի ընդունումը արդեն կրել է զանգվածային բնույթ, թեև հին հավատալիքների մնացուկները, կենսունակություն դրսևորելով, պահպանվել են դեռևս երկար ժամանակ: Կարևոր է նշել, որ վերևում հիշատակված ժամանակներում նորադարձ քուրդ մուսուլմանները հարել են գլխավորապես իսլամի ուղղադավան՝ սուննիական ուղղությանը: Նոր ժամանակներում Մերձավոր և Միջին Արևելքի տարբեր շրջաններում բնակվող քրդերի ճնշող մեծամասնությունը իսլամի շաֆիական մազհաբի հետևորդ սուննիներ էին: Կային նաև հանաֆիական մազհաբի հետևորդներ, որոնց ընդհանուր թվաքանակը կազմում էր մոտ 15 տոկոսը[6]: Ներկայումս ևս շիականության հետևորդ քրդերի թիվը մեծ չէ: Շիա քրդերը գլխավորապես բնակվում են Իրանի Քերմանշահ նահանգում, Քորդեսթան նահանգի հարավային մասերում, փոքր թվով՝ Խորասան նահանգում և ցրված են երկրի այլևայլ մասերում: Շիաների մեկ այլ խումբ, որը հայտնի է «Ֆայլի քրդեր» անվամբ, 1970–1980-ական թվականներին Իրաքից տեղափոխվել են Իրան և բնակություն հաստատել իրանա-թուրքական սահմանային գոտում:

Շիականության հետևորդ քրդեր կան նաև Թուրքիայում, Իրաքում և Մերձավոր Արևելքի մի շարք արաբական երկրներում: Հնուց անտի սուննի և շիա քրդերի միջև առկա են լուրջ տարաձայնություններ, որոնք հաճախ վերածվում են անհաշտ թշնամանքի:

Հայտնի է, որ դեռևս VIII դարում շիականությունը դադարել էր իսլամի միատարր հոսանք լինելուց՝ բաժանվելով չափավոր և ծայրահեղ ճյուղավորումների: «Դասական» կամ «իթնաաշարի» շիականությանը զուգահեռ ձևավորվել էր նաև ծայրահեղ շիական աղանդներից մեկը՝ «Ահլ-ե հաղղ» («Ճշմար-

[5] **Minorsky** 1955, 1200.

[6] **Banuazizi** and **Myron** 1986, 86.

տության մարդիկ») կամ «Ալի-իլահի» («Ալիի հետևորդներ») կրոնական աղանդը, որին հետևեցին նաև քրդերի որոշ հավաքականություններ: Հիշյալ աղանդի հետևորդներին անվանել են նաև «ղզլբաշներ»[7]: Իրենք, ալի-իլահիները, ղզլբաշ անունով իրենց չեն կոչել: Նրանց ղզլբաշ են անվանել սուննի քրդերը՝ որպես վիրավորական մականուն, նկատի ունենալով նրանց մերձավորությունը շիաների հետ, որոնց ուղղադավան (սուննի) քրդերը անվանում են «հերետիկոս», «անաստված» և այլն: Թուրքիայում հաճախ ահլ-ե հաղղերին ծաղրական ձևով անվանել են նաև «Յոլ ուշաղի» («երեխայի ճանապարհ»):

Անցյալում, ինչպես նաև մեր ժամանակներում, առկա են ահլ-ե հաղղ աղանդին հետևող քրդեր Թուրքիայում, որոնք հոծ զանգվածներով բնակվում են Սըվասի (Սեբաստիա) և Դիարբեքիրի միջև ընկած տարածքներում, Խարբերդի հովտի հյուսիսային մասերում, հատկապես Դերսիմի (Թունջելի) դժվարամատչելի լեռնային շրջանում, Արածանի (Մուրադչայ) գետի հովտում, Երզնկայի (Էրզինջան) և Խարբերդի միջև Բինգյոլ դաղ լեռների հարավում՝ Վարդո կազայում: Ոչ մեծ թվով ահլ-ե հաղղի հետևորդ քրդեր (ինչպես նաև թուրքեր, թուրքմեններ և այլն) ցրված են Էրզրումի, Մուշի, Խնուսի, Ճապաղջուրի, Արաբկիրի, Մալաթիայի և Մարաշի շրջաններում:

Իրանում քուրդ ահլ-ե հաղղերի բնակության հիմնական վայրերն են Իրանական Քրդստանի առանձին շրջանները, հատկապես Քերմանշահի նահանգը, Իրանական Ադրբեջանի և Լորեսթանի առանձին վայրերը: Փոքր համայնքներով նրանք ցրված են նաև Միջագետքում՝ Սուլեյմանիեի, Քիրքուքի և Մոսուլի շրջաններում, իսկ Հյուսիսային Իրաքում այդ դավանանքը որոշ տարածում ունի նաև թուրքմենների (թուրքոմանների) շրջանում: Որոշ թվով ալի-իլահիներ կան Աֆղանստանում, սակայն նրանց էթնիկական ծագումը հայտնի չէ:

Ահլ-ե հաղղի ծեսերի և կրոնական սկզբունքների վերաբերյալ տեղեկությունները չափազանց սուղ են, քանի որ նրա հետևորդները խնամքով թաքցնում էին դրանք՝ պաշտոնական կրոնի կողմից հալածանքների չենթարկվելու նպատակով: Առավել ևս, որ մուսուլման քրդերը վայրագ ատելությամբ էին վերաբերվում ղզլբաշ քրդերին:

Ահլ-ե հաղղ աղանդի սուրբ գիրքը կոչվում է «Սարանջամ» («Գիրք կատարման մասին»): Այդ աղանդը իսլամի հիմնադիր Մուհամմադ մարգարեի

---

[7] Ղզլբաշների մասին մանրամասն տե՛ս **Ziba Mir-Hosseini** 1994; **Matt** 1988; **Grenada** 1904; **Минорский** 1911; Религиозная секта кызылбашей в Малой Азии, 1905; “Ahli-Hakk”, “The Encyclopaedia of Islam, 1981.

հորեղբորորդի և փեսա (Մուհամմադի աղջկա՝ Ֆաթիմայի ամուսին), չորրորդ խալիֆա Ալի իբն Թալիբի պաշտամունքը հասցնում է ծայրահեղության, նրան համարելով Աստծո մարմնացում և նույնիսկ Աստված: Հենց այդ պատճառով էլ այդ աղանդի հետևորդներին կոչել են Ալի-իլահիներ, այսինքն Ալիին աստվածացնողներ:

Ահլ-ե հաղղերի աղանդը աչքի է ընկնում ծեսերի բազմազանությամբ, որոնցից կարևորագույնը «ջամն» է («ժողով»), որին մասնակցում են բացառապես տղամարդիկ: Այդ ծեսի խորհուրդն է ներքին պայծառացման, հափշտակվածության (էքստազի) միջոցով Բարձրյալի հետ միստիկական կապերի հաստատումը: Դրան նրանք հասնում են յուրահատուկ կրոնական տաղերի՝ «քալամների» ռիթմիկ ու միապաղաղ կրկնության, մարմնական շարժումների, հատկապես տևական պտույտների շնորհիվ, որոնք որպես կանոն ընդունում են մոլեգին բնույթ: Հափշտակվածության (էքստազի) մեջ ընկած ծեսի մասնակիցները ի վերջո հասնում են մի այնպիսի աստիճանի, որ ոտաբոբիկ քայլում են վառվող ածուխների վրայով, կամ շիկացած ածուխները դնում են իրենց բերանը, առանց ցավ զգալու և նույնիսկ դույզն-ինչ վնասվելու:

Ահլ-ե հաղղերի ընդհանուր հավաքույթները («ջամ» կամ «ջամջամ») տեղի են ունենում կարևոր իրադարձությունների կապակցությամբ: Ջամի ժամանակ կատարվում է արու կենդանիների զոհաբերություն (նադր-վա-նիյաթ): Եփված մսի բաժանումը (խայիր վա-խիզմաթ) պարտադիր է զոհաբերությունը «ընդունելի լինելու» համար: Բարոյական կատարելության հասնելու համար տղամարդկանց և կանանց միջև կնքվում են դաշինքներ[8], որից հետո նրանք իրենց անվանում են եղբայր և քույր (շարթ-ի իքրար): Ձմռանը խստիվ պահում են ծոմ, որը շարունակվում է երեք օր: Ծոմին հետևում է տոնը (բիրխ բորան), որի ժամանակ մորթում են ոչխարներ: Նոր տարին՝ Նովրուզը մահմեդականների նման ահլ-ե հաղղերի կողմից տոնվում է մեծ խանդավառությամբ ու բերկրանքով[9]:

Ահլ-ե հաղղի դավանանքը տիպիկ սինկրետիկ է: Նրա հետևորդների հավատալիքները իսլամական տարրերի խառնուրդ են: Բացի զուտ շիական հավատալիքներից, այդ կրոնի պատկերացումների համակարգում կարելի է բազում զուգահեռներ գտնել ժամանակին տարածաշրջանում գոյություն ունեցող իրանական ծագում ունեցող կրոններին՝ զրադաշտականությանն ու մանի-

[8] **Никитин** 1964, 347.

[9] Տե՛ս **Аверьянов** 1907.

քեականությանը, ինչպես նաև գնոստիկական աղանդների հավատալիքներին: Ահլ-ե հաղղը ընդհանուր աղերսներ ունի նաև նուսայրիթների (ալավիների) կրոնի հետ: Թեև «ահլ-ե հաղղերը միաստվածական են և ընդունում են միակ Աստծո, միակ Արարչի գաղափարը, նրանց պատկերացումները Աստծո և աշխարհի հետ նրա ունեցած կապի մասին զգալի տարբերվում են միաստվածական կրոնների ներկայացրած պատկերից, հանդիսանալով մի խառնուրդ իսլամական և նախաիսլամական հավատալիքների»[10]:

Ահլ-ե հաղղի հետևորդները հավատում են ոգու վերամարմնավորման գաղափարին: Նրանց սուրբ գրքում ասվում է. «մարդիկ, մի վախեցեք մահվան սարսափից: Մարդու մահը նման է բադի թռիչքին դեպի ջուրը: Նա սուզվում է մի տեղում, որպեսզի դուրս գա մեկ այլ տեղ»: Ըստ ֆրանսիացի արևելագետ Ա. Գոբինոյի, ահլ-ե հաղղերը հավատում են, որ մարդը իր գործած մեղքերի համար վերածնվում է ավելի ծանր կյանքի համար[11]: Համաձայն նրանց ուսմունքի, մարդկային էակները պետք է անցնեն կերպարանավորման հազար ու մեկ շրջափուլի միջով, որի ընթացքում նրանք վարձահատույց կլինեն իրենց կատարած բարի գործերի համար[12]:

Գոբինոն, Մինորսկին և մի շարք այլ հետազոտողներ ժխտում են, որ, իբր, ահլ-ե հաղղերը կազմակերպում են գիշերային օրգիաներ[13]: Ֆրանսիացի գիտնական-աշխարհագետ Էլիզե Ռեքյուն այդ առթիվ գրում է. «իրավամբ թե անիրավացի, ղզլբաշները դատապարտվում են իրենց դրացիներից իբրև գիշերային տոնախմբություններ կատարողներ, ուր տիրում է ամենակատարյալ խառնակություն սեռերի, որի պատճառով էլ նրանց անվանում են «ճրագ մարողներ» («չերաղ քոշան»[14]):

Հիսուս Քրիստոսին ղզլբաշներն ընդունում են ոչ միայն որպես մարգարե, այլ նախ՝ որպես Աստված, որը ժամանակավորապես երևութական ձևով ընդունել է մարդու կերպարանք: Նրանք մեծ հարգանքով են վերաբերվում նաև աստվածամորը՝ Մարիամ Աստվածածնին[15]:

---

[10] Ահլ-ե հաղղերի հավատալիքների, նրանց ծեսերի, կրոնական արարողությունների մասին տե՛ս **Ասատրյան** 2007, 5–12:

[11] **Gobineau** 1859, 330–370.

[12] The Encyclopaedia of Islam 1960, 261.

[13] **Gobineau** 1859, 330–370; **Минорский** 1911.

[14] **Ռեքյու Էլիզե** 1893, 38:

[15] Mc **Dowall** 1989, 18.

Հայտնվել է տեսակետ այն մասին, որ ահլ-ե հաղղը աղավաղված քրիստոնեական աղանդ է: Ուշագրավ է նշել, որ Իրանում ապրող ահլ-ե հաղղերը (Ալի-իլահիներ) որևէ կապ չունեն քրիստոնյա աշխարհի հետ, մինչդեռ նրանք, որոնք երկար ժամանակ Թուրքիայում ապրել են հայերի շրջանում, մինչև մեր օրերը պահպանել են քրիստոնեությունից վերցրած բազմաթիվ հավատալիքներ: Նրանք հատուկ հարգանք են դրսևորում դեպի հայկական եկեղեցիները, նրանցում կատարում են ծիսական զոհաբերություններ, իրենց հիվանդների վրա կարդալ են տալիս Աստվածաշունչ, Նարեկ և այլն: Անդրանիկը գրում է, որ «ղզլբաշները մուսուլման չեն, քրիստոնյա չեն և ոչ էլ հրեա»: Նրանց դավանանքը հին և նոր կրոնների մի խառնուրդ է: Նրանք Ալիին պաշտում են Հիսուս Քրիստոսի հետ համահավասար: Նրանց «դեդեները» ասում են, որ Քրիստոսը դա նույն մարդն է, ինչ Ալին: Նա մեզ ներկայացել է որպես Ալի, իսկ քրիստոնյաներին՝ որպես Քրիստոս: Անդրանիկը նաև նշում է, որ ղզլբաշները պաշտում են հայոց սրբերին, այդ թվում նաև Սուրբ Սարգսին, Սուրբ Գևորգին և այլն[16]: Վ. Մինորսկին նկատում է, որ անբարյացակամ վերաբերմունք դրսևորելով մուսուլմանների նկատմամբ, ահլ-ե հաղղի հետևորդները չափազանց բարեկամական վերաբերմունք ունեն քրիստոնյաների հանդեպ: Օրինակ, Մակուի ալի-իլահիները հիանալի հարաբերությունների մեջ են հայերի հետ: Այդ նույն երևույթը, նրա ասելով, նկատվում է նաև Թուրքիայի ղզլբաշների կողմից[17]:

Երբեմն ահլ-ե հաղղը անվանում են ոչ թե իսլամի աղանդներից մեկը, այլ առանձին կրոն: Կարևոր է նշել, որ ալի-իլահիները մյուս քրդերից զանազանվում են ոչ միայն հավատով, այլև լեզվով՝ խոսում են գլխավորապես զազա կոչված լեզվով (զազաերենով), ինչպես նաև հյուսիս-արևմտյան իրանական բարբառների թվին պատկանող գուրանիով:

Մուսուլմանները ահլ-ե հաղղերին համարում են քրիստոնեական աղանդ նաև այն հիմնավորումով, որ նրանք խմում են գինի, կատարում են մկրտության ու հաղորդության ծեսերը և չեն քողարկում իրենց կանանց: Այդ աղանդի հետևորդներին, անկախ նրանց էթնիկ ծագումից (քրդեր, թուրքեր, պարսիկներ, թուրքմեններ, արաբներ և այլն) իշխանություններն ու մուսուլմանական հոգևորականությունը մշտապես ենթարկել է հալածանքների, նրանց համարելով անհավատ հերետիկոսներ: Մասնավորապես, թուրքերը բազմիցս փոր-

[16] **Անդրանիկ** 1901, 27:
[17] **Минорский** 1915, 25.

ձել են նրանց պարտադրել իսլամը, սակայն ամեն անգամ մատնվել են անհաջողության: Ատելությունն ու թշնամանքը եղել է փոխադարձ: «Կրելով մահմեդական անուններ,- գրում է ռուս հետախույզ-գնդապետ Վ. Կարցևը,- նրանք սարսափելի կերպով ատում են մահմեդականներին և աշխատում են վնասել նրանց ամեն տեղ, ուր դա կարելի է անել առանց շատ ակներև վտանգի ենթարկվելու: Թուրքը ավելի լավ է համարում գիշերել բաց երկնքի տակ, դաշտում կամ երկապատիկ ավել ճանապարհ անցնել, քան թե հյուր մնալ ալի-իլահիների գյուղում»[18]:

Ավանդաբար եվրոպական գիտնականները ահլ-ե հաղ կամ ղզլբաշ դավանանքին պատկանող Դերսիմի բնակչությանը համարել են քրդեր: Սակայն քրդական իրականությանը ավելի քաջատեղյակ գիտնականները, ճանապարհորդները, զինվորական դիտորդները և այլն համամիտ չեն այդ տեսակետին, գտնելով, որ նրանց չի կարելի դասել քրդական էթնիկական հանրության թվին: Ռուս արևելագետ-դիվանագետ Վլադիմիր Մինորսկին, օրինակ, գտնում է, որ դերսիմցիները իրենց լեզվով (զազա), առանձնահատուկ կրոնով և այլ հատկանիշներով «առանձնանում են մնացած քրդերից»[19]:

Դերսիմի ղզլբաշ բնակչության հարևանությամբ ապրող հայերը ևս նրանց անվանել են ոչ թե քրդեր, այլ «դուժիկներ»[20]:

Այդ հարցի մասին վերին աստիճանի ուշագրավ տեսակետ է հայտնում հայ ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցը: Նա գրում է. «... Դերսիմի և Խարբերդի սանջակները էթնիկական և աշխարհագրական առումով կազմում են Հայկական բարձրավանդակի անբաժանելի մասը: Մինչեւ պատերազմը (Առաջին աշխարհամարտը – Վ.Բ.) այստեղ հաշվվում էր կլոր թվով մինչեւ 100 հազար հայ (ըստ Լինչի 85 հազար, ըստ Cuinet-ի՝ 70 հազ.) եւ նույնքան կամ փոքր-ինչ ավելի մի այլ ազգություն, որին սխալմամբ քրդական են համարում: Թուրքերը նրանց «ղզլբաշներ» են անվանում, իսկ հայերը՝ «դուժիկներ»: Վերջին անվանումը նրանք ավելի հաճախ տալիս են Դերսիմի բնակիչներին: Արեւելքում, մահմեդական վարչակարգի երկրներում, լեզուն համարյա դադարել է ազգության նշան լինելուց, գլխավոր գործոնի նշանակությունը զիջելով կրոնին: Ղզլբաշները և դերսիմցիները դավանում են մի կրոն, որն առանձնացնում է նրանց մահմեդականներից և քրիստոնյաներից: Նրանց հավատալիքները իրենց հիմքում կազմում են քրիստոնեական եւ մա-

[18] **Карцев** 1896, 10.

[19] **Минорский** 1915, 4–5.

[20] **Ինճիճեան** 1806, 110–111: Տե՛ս նաև **Անդրանիկ** 1901:

նիքեական ըմբռնումների մի խառնուրդ, սքողված են շիիզմի արտաքին ձևերով: Պատմական լեզվով դա նշանակում է, որ նրանք աղանդավորներ են, հայկական պավլիկյանության հետևորդների թվից: Շիիզմի նշանների պատճառով, սուննիները նրանց անվանում են ղզլբաշներ, այսինքն՝ նույնացնում են պարսիկների հետ: Իսկ հետո հայկական դուժիկ անվանումը նշանակում է «աղանդավոր», ամենից ավելի հավանական է, որ այդ բառին է հառնում նաև Դերսիմ անվանումը, եւ նշանակում է աղանդավորների երկիր (Դուժ՝ հին Դուրժից, այստեղից էլ Դերսիմ»[21]: «Պավլիկյան շարժման աղանդավորները,- շարունակում է Ն. Ադոնցը,- գրավում էին մի տարածք, որն ընկած էր Դերսիմի լեռներից մինչև Խարբերդ հասնող տարածությունների միջև: Բյուզանդիայի ճնշման տակ նրանցից ոմանք միացան պաշտոնական եկեղեցուն և մինչև օրս ապրում են Ակնի (Էգինի) տարածքում ռումեր կամ քաղկեդոնական հայեր անվան տակ»[22]:

Ն. Ադոնցը նկատում է նաև, որ ղզլբաշների ավանդույթներն ու սովորույթները նրանց ավելի են կապում քրիստոնյաների հետ, քան մահմեդականների: «Էթնիկական առանձնահատկություններով եւ, ամենից առաջ, իրենց խաղաղասեր բնավորությամբ նրանք տարբերվում են թուրքերից: Ոչ մի հիմք չկա այդ կիսաքրիստոնյա տարրերին դասել քրդերի շարքը. ոչ նվազ իրավունքով նրանք կարող են վերագրվել երկրի գլխավոր քրիստոնյա ազգաբնակչությանը: Նույն կշռադատումներով էլ անարդարացիորեն քրդական են համարում Դիարբեքիրի վիլայեթի հայկական շրջանները՝ Արղանա սանջաքը և Դիարբեքիրի սանջաքի հյուսիսային անկյունը»,- գրում է նա[23]:

Դերսիմի բնակչության քուրդ չլինելու տեսակետը բաժանում է նաև քրդական հարցի գիտակ Կարո Սասունին: «Ընդհանուր անուան տակ քիւրտ կոչվող զազաները,- գրում է նա,- այլ ցեղի կը պատկանին, թերեւս իրանեան մեծ արմատէն բաժնուած ըլլան երկուքն ալ»[24]:

Նշված տեսակետի հիմնավորման լրացուցիչ կռվան կարող է լինել նաև այն, որ Դերսիմը հանդիսացել է Հայկական բարձրավանդակի անբաժանելի մասը: Այն ընկած է Եփրատի արևելյան կողմում և Կամախի հարավային մասում: Դերսիմի մեջ էին մտնում Խոզաթի, Չարսանջակի և Չմշկածագի շրջանները: Հատկանշական է նաև, որ Դերսիմի ղզլբաշների ներքին կյանքը

[21] **Ադոնց** 1996, 123:
[22] **Ադոնց** 1996, 124:
[23] **Ադոնց** 1996, 124:
[24] **Սասունի** 1969, 44:

և նրանց հակաթուրքական շարժումները XVI դարից սկսած մինչև օրս ընթացել են ուրույն ուղիներով՝ միանգամայն անջատ Թուրքիայի քրդական զանգվածների շարժումներից:

Եզդիականությունը

Մերձավոր Արևելքում ծնունդ առած հետաքրքիր ու յուրահատուկ կրոններից մեկն էլ եզդիականությունն է (եզիդիզմ): Եզդիների պաշտամունքի սոցիալ-քաղաքական կազմակերպության և կրոնական հասարակության վերաբերյալ տեղեկությունները ևս չափազանց սուղ են: Այդ դավանանքի ծագման արմատները ևս առ այսօր գիտության համար դեռևս լրիվ պարզված չեն: Եզդիների մասին ամենահին տեղեկությունները կարելի է գտնել միջնադարյան մի շարք պատմիչների (Շահրիստանիի, Իբն ալ-Ասիրի, Հաջի Խալֆիի) և այլոց հիշատակումներում: Ավելի ուշ նրանց մասին տեղեկություններ կան եվրոպական ճանապարհորդների ուղեգրություններում, ինչպես նաև եվրոպական գիտական ընկերությունների հրապարակումներում:

Համարյա բոլոր եվրոպացի ճանապարհորդները խոսելով եզդիների մասին, անդրադառնում են լոկ նրանց բարքերին ու սովորույթներին: Ինչ վերաբերում է նրանց կրոնին և առհասարակ դավանանքի հետ կապված խնդիրներին, ապա դա եվրոպացիների համար մնում էր մութ ու անմատչելի, որպես չբացահայտված գաղտնիք: Դրա պատճառն այն էր, որ արևելքի այլ կրոնական համայնքների և աղանդների ներկայացուցիչների նման, եզդիները օտար աչքերից խնամքով թաքցնում էին իրենց դավանանքը:

Միջին դարերում եզդիները հայտնի էին նաև «դասենի» անվամբ: Որոշ ժամանակակից հեղինակներ[25] նրանց անվանել են նաև «շեմսիյե» («արևապաշտներ»՝- «շեմս» արև բառից):

Եզդիների կրոնի հիմնադիր է համարվում շեյխ Ադին, որին եզդիները համարում են իրենց մարգարեն: Ինչպես նրա ինքնության, այնպես էլ եզդիականության ծագման վերաբերյալ գոյություն ունեն տարբեր կարծիքներ: Համարվում է, որ շեյխ Ադի (Հադի) բին Մոզաֆիրը ծնվել է Սիրիայում 1073 և 1078 թթ. միջև ընկած շրջանում: Մահվան թվականն է համարվում 1164 թ.: Նա թողել է մի շարք տրակտատներ, որոնք նվիրված են իր ուսմունքի շարադրմանը[26]: Քրդագետ Վ. Նիկիտինը համամիտ է Ռ. Լեսքոյի հետ, որ շեյխ

[25] Օրինակ տե՛ս **Waheed** 1955.

[26] Տե՛ս **Lescot** 1940.

Ադին XI դարի մարդ է և ապրել է Սիրիայում[27]: Մինչդեռ մեկ այլ արևելագետ՝ Ա.Ա. Սեմյոնովը, գտնում է, որ շեյխ Ադին ապրել է XIII դարում[28]:

Գոյություն ունեն նաև տարբեր տեսակետներ եզդիականության ծագման վերաբերյալ: Այդ խնդիրը հատուկ քննության է ենթարկել նաև Ն. Մառը: Համաձայն նրա տեսության, «եզիդ» բառը ծագում է պարսկերեն «իզեդ»-ից, որ նշանակում է «Աստված»: Մառը կարծում է, որ եզդիականությունը քրդական հեթանոսական կրոն է, որը դավանում էր քրդերի մեծ մասը՝ մինչև իսլամի ընդունումը[29]: Նշված տեսակետի հետևորդների կարծիքով, եզդիները քրդական կրոնական համայնքներից մեկն են: Սակայն այս տեսակետը ապացուցված չէ և կարիք ունի գիտական հիմնավորման, առավել ևս, որ տեսակետ կա այն մասին, որ եզդիները առնչություն չունեն քրդերի հետ և առանձին ժողովուրդ են: Եզդիականությունը որպես նախաիսլամական շրջանի «համաքրդական» կրոն ներկայացնելը գիտական քննություն չի բռնում նաև այն պատճառով, որ եզդիական դավանանքը որպես կրոնական ուսմունք, ուշ շրջանի երևույթ է, ձևավորված միջնադարում (մոտավորապես XII–XIII դարերում) սուֆիական սուբստրատի վրա: Հետևաբար այն քրդերի համընդհանուր կրոնը լինել չէր կարող[30]:

Անգլիացի հետազոտող Ռոուլինսոնը և ամերիկացի Գրանտը եզդիականության ծագումը կապում են հուդայականության հետ: Մինչդեռ գերմանացի գիտնական Վագները գտնում է, որ եզդիականությունը աղերսվում է հին պարսկական հավատալիքների, ինչպես նաև քրիստոնեության և իսլամի հետ[31]: Ավստրիացի գիտնական Համմերի կարծիքով, եզդիները հին մարդերի ժառանգորդներն են, որոնց պարսից արքա Արշակ V-ը Պարսկաստանից գաղթեցրել է Միջագետք: Նրա ենթադրությամբ եզդիները իրենց կրոնը վերցրել են զրադաշտականությունից՝ ընդօրինակելով նրա հիմնական սկզբունքները[32]:

Ռուս հետազոտող Ի. Բերեզինը կարծիք է հայտնում, որ եզդիներն ունեն իրանական ծագում[33]: Իրենց հերթին մի շարք արաբ հեղինակներ եզդիներին վերագրում են արաբական ծագում: Եզդիների ծագման խնդիրը հետաքրքրել

---

[27] **Никитин** 1964, 326.
[28] **Семенов** 1927, вып. 16, 124.
[29] **Марр** 1911, 143, 147.
[30] **Փոլադյան**, **Ասատրյան** 1989, 133:
[31] **Wagner** 1852, 215.
[32] **Hammer** 1837, 107.
[33] **Березин** 1854, 444.

է նաև XIX դարի մի շարք հայ հեղինակների: Նրանց կարծիքով եզդիները հայկական եկեղեցուց հեռացած հերձվածողներ են[34]:

Գիտության մեջ շրջանառվել է տեսակետ այն մասին, որ իբր եզդիները նախկինում եղել են մահմեդական: Այդ տեսակետին անդրադառնում է նաև ֆրանսիացի արևելագետ Ռ. Լեսքոն[35]: Սակայն արդեն ապացուցված իրողություն է, որ եզդիները երբեք մուսուլման չեն եղել, չնայած նրանց կրոնի մեջ առկա են իսլամական որոշ տարրեր:

Եզդիական համայնքը հիմնված է կաստայական սկզբունքի վրա: Կաստաները բաղկացած են ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ մարդկանցից: Եզդիական կաստաները կատարելապես փակ կառույցներ են: Եզդիների բարքերն ու սովորույթները, կենցաղը, նույնիսկ հագուստների ձևը, դրանց գույնը, կտորի տեսակը անցյալում խիստ կանոնակարգված է եղել:

Եզդիների միջավայրում սրբության բարձրագույն կրողներ են համարվում շեյխերը, որոնք իրենց համարում են շեյխ Ադիից սերված: Նրանք կրում են սպիտակ զգեստ և սպիտակ գլխի փաթթոց (չալմա): Փիրերը շեյխերից տարբերվում են ավելի ցածր ծագմամբ: Նրանք կրում են սև զգեստ և սև չալմա՝ կարմիր երիզով[36]:

Եզդիական համայնքը հոգևոր անձանցից բացի, բաղկացած է նաև աշխարհիկ անձանցից: Աշխարհիկ իշխանության ղեկավար էմիրը համարվում էր շեյխ Ադիի ներկայացուցիչը երկրի վրա: Շեյխերը համախմբվում էին նրա շուրջ: Եզդիական համայնքները (թայիֆա) էմիրը կառավարում էր ցեղերի առաջնորդների (շեյխերի կամ աղաների) օգնությամբ: Յուրաքանչյուր ցեղ բաժանվում էր տոհմերի, իսկ դրանք, իրենց հերթին՝ ընտանիքների: Ցեղի առաջնորդն օգտվում էր լայն իշխանությունից: Նա էր նշանակում ավագներին, դատում ցեղի անդամներին: Ցեղի գործերը կառավարվում էին ավագների խորհրդի կողմից[37]:

Նստակյաց եզդիները համախմբված էին մշտական գյուղական համայնքի մեջ: Թույլատրվում էր մեկ համայնքից անցնել մյուսին: Շարքային մյուրիդը համարվում էր այն համայնքի անդամ, որտեղ բնակվում էր: Այսպիսով, մեկ շեյխի հոտը բնակվում էր տարբեր համայնքներում: XIX դ. վերջին եզդի-

[34] Տե՛ս **Никитин** 1964, 331.

[35] **Lescot** 1940, 40.

[36] **Леклерк** 1893, 36.

[37] **Максимович-Васильковский** 1903, 34.

ները սկսեցին ենթարկվել իրենց հոգևոր առաջնորդներին՝ արդեն ըստ տարածքային սկզբունքի:

Եզդիները պաշտում են Մալաքե-Թավուսին՝ սիրամարգ հրեշտակի տեսքով: Ըստ եզդիական կրոնական ուսմունքի, Մալաքե-Թավուսը գոյություն է ունեցել բոլոր արարածներից առաջ: Աստված տիեզերքը ստեղծել է Մալաքե-Թավուսի օգնությամբ՝ նրա հետ միասին: Մալաքե-Թավուսը մերթ հանդես է գալիս որպես աստված, մերթ նրա փոխանորդ՝ տեղակալ, իսկ երբեմն որպես նախկինում աստծո մերձավոր, որը հետագայում վտարված է դրախտից: «Գիրք հայտնությունում» ասվում է, որ Մալաքե-Թավուսը եղել է ի սկզբանե և կմնա հավիտյանս հավիտենից: Նա իշխում է բոլոր արարածների վրա և կարգավորում է նրանց գործերը: Նա պատրաստակամ ու բարի է բոլոր նրանց համար, ովքեր հավատարիմ են իրեն և կարիքի դեպքում դիմում են իրեն: Մալաքե-Թավուսը ամենուրեք է, նա մասնակից է բոլոր իրադարձություններին[38]: Եզդիները հավատում են Մալաքե-Թավուսի գալստյանը:

Եզդիների գլխավոր սրբավայրը գտնվում է Մոսուլից հյուսիս-արևելք՝ Լալը2 վայրում: Դա եզդիական սրբի՝ շեյխ Ադիի գերեզմանն է, որի վրա շինված տաճարը բոլոր եզդիների սրբությունն է: Յուրաքանչյուր եզդի աշխատում է իր կյանքի ընթացքում գեթ մեկ անգամ այցելել այդ սրբավայրը: Լալը2ում այսօր էլ նստում է եզդիների առաջնորդը՝ Միրին (Միրեշեխանը):

Եզդիների կրոնը քննության առարկա դարձրած բազմաթիվ գիտնականներ հանգել են այն եզրակացության, որ եզդիականությունը սինկրետիկ կրոն է, որը ներառել է տարրեր տարբեր կրոններից՝ զրադաշտականությունից, մանիքեականությունից, մովսիսականությունից (հուդայականությունից), քրիստոնեության նեստորական ուղղությունից, բուդդայականությունից և իսլամից: Գիտնականներն այն կապում են նաև հին իրանական հավատալիքների, արևապաշտության և այլ կրոնական ուսմունքների հետ: Տեսակետ կա նաև այն մասին, որ եզդիականության մեջ առկա են տարրեր նաև իսմայելականությունից, սաբեականությունից, շամանիզմից և սուֆիզմից[39]:

Թեև եզդիականության մեջ նկատելի են որոշակի աղերսներ արևապաշտության հետ (արևածագին եզդին անպայման դեմքով շրջվում է արևի կողմը

---

[38] **Փոլադյան** և **Ասատրյան** 1989, 134–135: (Նշված արևելագետ-քրդագետների հոդվածը առաջին փորձն է հայ ընթերցողին ներկայացնելու եզդիական ուսմունքի հիմնադրույթների գրավոր ժողովածուները):

[39] The Shorter Encyclopaedia of Islam, 1961, 641–644; **Drower** 1941; **Layard** 1849, vol. 1; **Guest** 1993.

և երեք անգամ խոնարհում կատարում նրա առջև), սակայն ինչպես իրավացիորեն նկատում են արևելագետ-քրդագետներ Ա. Փոլադյանը և Գ. Ասատրյանը իրենց հետաքրքիր ու շահեկան հոդվածում, «բնական երևույթների, տարերքի մեծարումը, ինչպես հայտնի է, մտնում է յուրաքանչյուր ժողովրդի նախնական հավատալիքների համակարգի մեջ, և բնականաբար դա բնիկ երևույթ է և չի կարող դիտվել որպես փոխառություն: Բավական է նշել, որ և՛ արևի, և՛ լուսնի, և՛ կրակի պաշտամունքը, որքանով այն տարածված է եզդիների շրջանում, կարելի է հանդիպել պարսիկների, հայերի, տաջիկների և այլ ժողովուրդների նախնական հավատալիքներում»[40]:

Որոշ հետազոտողների կարծիքով, թեև եզդիականության մեջ առկա են տարբեր կրոններից փոխառված տարրեր, այդ կրոնը դժվար է զուտ սինկրետիկ անվանել, քանի որ այն կառուցված է սեփական կրոնական ընկալումների վրա, և նրա մեջ տիրապետողը բուն եզդիականության սկզբունքներն են:

Մահմեդականները և քրիստոնյաները ստեղծել են այն առասպելը, թե, իբր, եզդիները խավար ոգիներին՝ սատանային են պաշտում և ըստ այնմ կատարում են զանազան սարսափելի ծեսեր: Իրականում դա այդպես չէ: Առհասարակ կարևոր է նշել, որ եզդիների պատկերացումները աստծո մասին աչքի են ընկնում ոչ միայն յուրահատկությամբ, այլև բարդությամբ: Նրանց աստվածությունը տարբերվում է մուսուլմանական Ալլահից և հրեական Եհովայից: Աստծո ընկալումը նրանց մոտ հանդես է գալիս Երրորդության չափանիշով, որտեղ առաջինը և գլխավորը Մալաքե-Թովուսն է, երկրորդը՝ շեյխ Ադին և երրորդը՝ Եզիդը: «Հիմնական գիծը, որ եզդիական աստծուն միավորում է նշված կրոնների աստվածներին, դա նրա արարչագործական (դեմիուրգի) ֆունկցիան է: Այս վարդապետության մեջ աստված տիեզերքի սոսկ ստեղծողն է և ոչ նրա պաշտպանն ու հովանավորը: ... Եզդիականության մեջ արարիչը ներկայացված է որպես ամենակարող էակ՝ օժտված գերբնական ուժով, սակայն հեռու աշխարհի գործերից և հոգսերից»[41]:

Ուշագրավ է, որ եզդիները իրենց սրբերի թվին են դասում նաև Մարիամ Աստվածածնին, Հիսուս Քրիստոսին, Մուհամմադ Մարգարեին և Ալիին:

Մահմեդական ժողովուրդները, հատկապես թուրքերը, առաջնորդվելով կրոնական անհանդուրժողականության զգացումներով, բոլոր ժամանակներում մոլեռանդությամբ հալածանքների են ենթարկել եզդիներին, նրանց հա-

---

[40] **Փոլադյան, Ասատրյան** 1989, 133:

[41] **Փոլադյան, Ասատրյան** 1989, 132:

մարելով «սատանայապաշտներ», «կրոնուրացներ», «հեթանոսներ» և այլն: Օսմանյան կայսրությունում մահմեդական բարձր հոգևորականության ներկայացուցիչները պարբերաբար հրապարակում էին եզդիների դեմ թշնամական ոգով տոգորված ֆեթվաներ և նրանց դեմ հալածանքներ հրահրում: Այդ հալածանքներից փրկվելու համար հաճախ եզդիները ստիպված են եղել դավանափոխ լինել և ընդունել իսլամը: Հալածանքների և եզդիների պարբերական ջարդերի հետևանքով նվազել են այդ ժողովրդի թիվը և տարածման շրջանակները: «Թշնամաբար տրամադրված հարևանների մշտական հալածանքները և կրոնական հետապնդումները նպաստել են եզդիների կղզիացմանը և մահմեդական շրջապատից մեկուսացմանը, և հակառակ դրան՝ նրանց հակվածությանը դեպի քրիստոնյաները, հատկապես՝ հայերը»[42]:

Եզդիների նկատմամբ մահմեդական քրդերը ևս վերաբերվում էին անհաշտ թշնամանքով և մշտապես հալածանքների էին ենթարկում նրանց: «Քուրդ մուսուլմանների ատելությունը եզդիների նկատմամբ,- գրում է ռուս զինվորական դիտորդ Ա. Մ. Կոլյուբակինը,- արդարև ապշեցուցիչ է: Քրիստոնյաների նկատմամբ հանդուրժողաբար վերաբերվող հայդերանլի, զիլանլի, ջելալի, հասանանլի, միլանլի, թողուրի և այլ ցեղերը խորապես ատում և արհամարհում էին եզդիներին, նրանց համարելով իրենց ոխերիմ թշնամիները և միշտ պատրաստ լինելով նրանց հասցնելու որևէ վնաս»[43]: «Քրդերի մոտ կատարելապես թույլատրված է սպանել եզդիներին,- գրում է քուրդ պատմիչ Մելա Մահմուդ Բայազիդին,- և ամեն անգամ, երբ լինում է հարմար առիթ, քուրդ մուսուլմանները սպանում են եզդիներին, իսկ նրանց կանանց վերածում են ստրուկների... Նրանք եզդիներին համարում են կրոն ուրացողներ»[44]:

Քուրդ մուսուլմանները եզդիներին անվանում էին «սատանայապաշտներ», հետևաբար ոչնչացման ենթակա արարածներ: Հայտնի է նույնիսկ, որ 1415 թ. մուսուլմանական բնակչությունը ավերել է շեյխ Ադիի դամբարանը:

Նույնպիսի ատելությամբ եզդիները վերաբերվում էին մահմեդական քրդերին: Այդ փոխադարձ ատելությունն էր գլխավոր պատճառներից մեկը, որ եզդիներն ունեին առանձնահատուկ հարաբերություններ հայերի հետ՝ հաճախ նրանց հետ համատեղ հանդես գալով մահմեդական քրդերի հարստահարությունների ու բռնությունների դեմ: Ի դեպ, նկատի ունենալով եզդիների հարգալից վերաբերմունքը դեպի հայկական եկեղեցին, XIX դարի հայ որոշ

[42] **Փոլադյան, Ասատրյան** 1989, 132:
[43] **Колюбакин** 1891, 84.
[44] **Васильева** 2009, 93.

հեղինակներ եզդիներին համարել են հայկական եկեղեցուց տրոհված հերձվածողներ, մի բան, որը զուրկ է պատմական հիմքից:

Ուշագրավ է նշել, որ կրոնական և այլ կարգի շարժառիթներով XI դարից սկսած եզդիների մի ստվար հատված Միջագետքից գաղթել է Արևմտյան Հայաստան և բնակություն հաստատել գլխավորապես Էրզրումի, Դիարբեքիրի և Վանի շրջաններում: Ավելի ուշ՝ XIX դարում, նրանք հայտնվել են նաև Կարսի շրջակայքում և Հարավային Կովկասում[45]: 1830–1840-ական թվականներին, ինչպես նաև հետագա ժամանակներում հալածանքների ենթարկվելով իրենց մահմեդական հարևանների՝ թուրքերի, մուսուլման քրդերի, մասամբ նաև արաբների կողմից, եզդիները մեծ խմբերով բնակություն են հաստատել Արևելյան Հայաստանում: «Սոված, անարգված ամեն ցեղի ու ամեն կրոնի դրացիներից, երբեմն ստիպված լինելով կռվել պաշտպանվելու համար, երբեմն ստիպված խուսափել իրենց հալածողներից, սպառվելով սովից ու հիվանդություններից ավելի, քան սրից, այնուամենայնիվ նրանք (եզդիները – Վ. Բ.) հաջողել են դարերի ընթացքում պահպանել իրենց աղքատ հասարակությունները»,- գրում է ֆրանսիացի գիտնական Էլիզե Ռեկլյուն[46]:

Ներկայումս եզդիները հիմնականում բնակվում են Իրաքում, Մոսուլից արևմուտք գտնվող Սինջարի լեռնաստանում, Այն-Սիֆնիի և Դոհուկի շրջաններում, Սիրիայում (Հալեպից հյուսիս ընկած տարածքներում), Թուրքիայում (Դիարբեքիրի, Այնթափի, Մարդին-Միդյաթի, Ուրֆայի շրջաններում, որոշ թվով Իրանում, Հարավային Կովկասում (Հայաստանում և Վրաստանում), Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայում և այլն: Եզդիական համայնքներ կան Եվրամիության մի շարք երկրներում: Աշխարհում եզդիների թվաքանակի վերաբերյալ ստույգ տվյալներ գոյություն չունեն: Ըստ եզդի մտավորականության կողմից ներկայացվող վիճակագրության, ներկայումս աշխարհում եզդիների թիվը կազմում է մոտ երկու միլիոն մարդ:

Եզրակացություններ

Հոդվածում ծավալուն անդրադարձ է կատարվում այն հարցի շուրջ, թե ինչ կրոն են դավանել քրդերը մինչև իսլամի ընդունումը: Այդ հարցի վերաբերյալ բերվում են գիտության մեջ շրջանառվող տարբեր վարկածներ: Ճշտվում է քրդերի շրջանում իսլամի զանգվածային տարածման ժամանակաշրջանը: Համակողմանի անդրադարձ է կատարվում այն հարցին, որ բացի իս-

[45] Տե՛ս **Березин** 1854.

[46] **Ռեկլյու Էլիզե** 1893, 369:

լամի սուննիական և շիական ուղղություններից, քրդերի շրջանում տարածում է գտել նաև ծայրահեղ շիական աղանդներից մեկը՝ <ալի-իլահի> կոչված աղանդը: Հոդվածում լայն տեղ է հատկացվել նաև եզդիական կրոնին վերաբերող հարցերին:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 1996, Հայկական հարց, Երկեր, հ. Ա, Երևան, «Հայագիտակ» հրատ., 244 էջ:

Անդրանիկ 1900, Տերսիմ. Ճանապարհորդություն և տեղագրություն, Թիֆլիս, տպ. Մն. Մարտիրոսեանցի, 238 էջ:

Ասատրյան Մ. 2007, Արարիչ Աստծո կերպարն Ահլ-ե հաղղերի հավատալիքներում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», հ. XXVI, Երևան, «Ասողիկ» հրատ., 315 էջ:

Ինճիճեան Ղ. 1806, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եվրոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ, մասն Ա, հատ. Ա, Վենետիկ, ի Վանս Սբյն Ղազարու, 424+38 էջ:

Ռեքլյու Էլիզե 1893, Լազիստան, Հայաստան և Քուրդիստան, Վաղարշապատ, Մայր Աթոռի տպարան, 148 էջ:

Սասունի Կ. 1969, Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրդական յարաբերութիւնները (ԺԷ դարեն մինչեւ մեր օրերը), Պէյրութ, Technolinguistics, 331 էջ:

Փոլադյան Ա., Ասատրյան Գ. 1989, Եզդիների դավանանքը (հիմնական աստվածությունները, սուրբ գրքերը), «Պատմաբանասիրական հանդես», թիվ 4, Երևան, ՀՍՍՌ ԳԱԱ հրատ., էջ 131–150:

Некоторые сведения о турецких курдах кызылбашах (Из путевых заметок французского вице-консула в городе Эзеруме г-на Гренара, составил П.И. Аверьянов.), 1907, «Известия штаба Кавказского военного округа», № 19, https://cihanekurdistan.livejournal.com/51183.html (հասանելի է 19.04.2023).

Березин И.Н. 1854, Езиды. «Магазин землевладения и путешествий», Географ. сборник, т. III, Москва, изд. Н. Фролова. с. 428–454.

Васильева Е.И. 2009, Книга по истории Курдистана, которая остается ненайденной. В кн.: «Курдский альманах», 1, Москва, б. и. , 210 с.

Карцев В. 1896, Заметки о курдах, Тифлис, тип. канц. Главнонач. гр.ч. на Кавказе, 48 с.

Колюбакин А.М. 1891, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. III, ч. I, отд. 2, Тифлис, тип. А. Михельсона, 293 с.

Леклерк Ж. 1893, Поездка на Арарат, СПб., Типо-литогр. Б. М. Вольфа, 46 с.

Максимович-Васильковский А.Е. 1903, Отчет о поездке по губернаторствам западной Персии, Тифлис, тип. канц. Главнонач. гр. ч. на Кавказе, 166 с.

Марр Н.Я. 1911, Еще о слове «Челеби» (К вопросу о культурном значении курдской народности в истории Передней Азии). «Записки восточного отделения императорского русского археологического общества», т. XX, вып. II–III, СПб,, тип. Императорской Академии наук, с. 99–151.

Минорский В.Ф. 1911, Материалы для изучения персидской секты «Люди истины» или Али-Иляхи, ч. 1, Москва, тип. «Крестного календаря», 127 с.

Минорский В.Ф. 1915, Курды. Заметки и впечатления, Петроград, тип. В.Ф. Киршбаума, 43 с.

Никитин В.П. 1964, Курды. Пер. с франц., Москва, «Прогресс», 347 с.

Поладян А. 1987, Курды в VII–X веках по арабским источникам, Ереван, изд-во АН Арм ССР, 129 с.

Религиозная секта кызылбашей в Малой Азии, «Известия штаба Кавказского военного округа», 1905, No 7–8.

Семенов А.А. 1927, Поклонение Сатане у переднеазиатских курдов-езидов. «Бюллетень Среднеазиатского Государственного университета», Ташкент, вып. 16, 222 с. https://kazneb.kz/ru/bookView/view?brId=1550726 (հասանելի է 20.04.2023).

"Ahli-Hakk", Kizilbash Kurds. "The Encyclopaedia of Islam, 2nd edition, Leiden, 1981.

Banuazizi A. and **Myron W.** (eds.) 1986, The State, Religion and Ethic Politics: Afganistan, Iran and Pakistan, Syracuse, p. 86.

Drower E.S. 1941, Peacock Angel, London;

Driver G.R. 1922, The Religion of the Kurds. – In: "Bulletin of the School of Orient and Afric Studies", vol. II, p. 197.

Grenada M.F. 1904, Une secte religiose d'Asie Mineaurel les Kysyl bâche, "Journal asiatique ou recueil de mémoirs d'extraits et de notices relatifs a la philosophie, aus langues et a la literature des pouples orientaux", mai-juin.

Gobineau A. 1859, Trois ans sen Asie, Paris, s. 330–370.

Guest 1993, Survival among the Kurds: A History of the Yezidis, London and New York, Routledge, Taylor and Fracis Group, 386 p.

Hammer J. 1837, L'histoire de l'Empire Ottoman depuis son origin jusqua nos jours 1300–1774, t. 7, Paris, s. 107.

Kurdo J. 1988, Kurdistan: The Origins of Kurdish Civilization, Stockholm, p. 55.

Layard A.H. 1849, Nineveh and its Remains, London, vol. 1.

Lescot R. 1940, Enquere sur les Yezidis de Syric et du Djebel Sinjar. – Memoires L'institut Transcasie de Damas, t. 4, Beyrout.

Matt M. 1988, Exstremist Shiits: the Chulat Sects, Syracuse

Mc **Dowall D.** 1989, A Briefing Note on the Alevi Kurds. In: "Minority Right Group", London, July, p. 18.

Minorsky V. 1955, "Kurden", Encyclopaedie de l'Islam, t. II, London, p. 1200

Nikitin V. 1922, Les Kurdes et le Christioanisme. – "Revue de l'histoire des religions", t. XXXV, p. 187.

The Encyclopaedia of Islam 1960, vol. 1, p. 261.

The Shorter Encyclopaedia of Islam 1961, London and Leiden, "Yazid", pp. 641–644.

Waheed A. 1955, The Kurds and their Country. A History of the Kurdish People (from Earliest Times to present), Lahore.

Wagner M. 1852, Reise nach Persien and dem Landeder Kurden, b. 2, Leipzig, s. 215.

Ziba Mir-Hosseini 1994, Inner truth and outer history: the two words of the Ahl-i Haqq of Kurdistan, “International Journal of Middle East Studies”, vol. 26.

К ВОПРОСУ О РЕЛИГИИ И РЕЛИГИОЗНЫХ ВЕРОВАНИЯХ КУРДОВ И ЕЗИДОВ

БАЙБУРТЯН В.

Резюме

Ключевые слова: христианство, ислам, кызылбаш, езиды, заза, каста, Дерсим.

В статье всесторонне рассматривается вопрос о религиозной принадлежности курдского народа в доисламский период. Отмечается, что по этому вопросу учеными-курдоведами выдвинуты многочисленные научные версии. Рассматривается также вопрос о том, когда и как среди курдов была распространена монотеистическая религия, т.е. ислам. Автор выдвигает версию о том, что, вероятно, распространение ислама среди курдов началось в IX веке, т.е. в период Арабского халифата, а в массовом порядке оно имело место в X–XI веках. При этом новая религия была навязана курдам как насильственным, так и миссионерским путем. В силу разных обстоятельств среди курдов было распространено суннитское направление ислама, а шииты составляли ничтожное меньшинство.

Кроме так называемого классического «шиизма», среди курдов имеет распространение также одна из важных сект крайнего шиизма, известная под названием «Ахле-хак» («Люди истины»). В статье вкратце изложены религиозные обряды этой секты.

Определенное место уделено также вопросу основных догм и обрядов религии езидов (езидизм). Мы располагаем ограниченными сведениями об этой интереснейшей религии, так как ее последователи тщательно скрывали основные догмы и обряды своей религии.

Езидизм окончательно был сформирован в XII–XIII веках на основе суфийского субстрата.

ON THE QUESTION OF CREED AND RELIGIOUS BELIEFS OF THE KURDS AND THE YEZIDIS

BAIBOURTIAN V.

Summary

Keywords: Christianity, Islam, Qizilbash, Yezidis, Zaza, caste, Dersim.

The article aims at comprehensively examining the question of the religious affiliation of the Kurdish people in the pre-Islamic period. It is noted that numerous research hypotheses have been put forward in this regard by different scholars of Kurdish Studies. An attempt is also made to elucidate the matter of the time period and the ways the monotheistic religion, i.e. Islam was spread among the Kurds. According to the approach put forward by the author, the spread of Islam among the Kurds possibly started in the IX century, when the Arab Caliphate was in rise, while the mass spread occurred in the X–XI centuries. Moreover, the new religion was adopted by Kurds both violently and through missionary propaganda. Due to different factors, the Sunni branch of the new religion was more widely spread among the Kurdish adherents of Islam, while the Shias constituted an insignificant minority.

The author also touches upon the fact that in addition to conventional Shiism, an esoteric extreme sect Ahl-e Haqq (followers of truth) gained devotees among the Kurds. The religious rituals of this sect are briefly expounded in the article.

The author also sheds light on the major dogmas and rituals of the religion of the Yezidis. It is mentioned that the information about this very interesting religion is relatively limited due to the fact that the followers of Yezidism tend to hide their main religious dogmas and rites.

The formation of Yezidism was finalized on a Sufi substratum in the XII–XIII centuries.